ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂՆԵՐ

Վերադարձ աշխատանքին

Կալիֆոռնիայի տնտեսության վերաբացման շնորհիվ աշխատատեղերի աճը շարունակվում է: Զբաղվածության զարգացման վարչությունը (EDD) կկողմնորոշի ձեզ գործազրկության նպաստների վերաբերյալ նորացված պահանջներով և կապ կհաստատի ձեր և ծառայությունների միջև՝ ապահով և հարմար աշխատանքի վերադարձնելու համար:

Աշխատանքի տեղավորման ծառայություններ

EDD-ն առաջարկում է անվճար աշխատանք գտնելու աննախադեպ օգնություն՝ Ձեզ նախապատրաստելով վերադառնալ աշխատանքի: Աշխատանքի տեղավորման հարցերով մասնագետները կարող են օգնել աշխատանքի որոնման ռազմավարության, կարիերայի աճի, ռեզյումեների պատրաստման և հարցազրույցին նախապատրաստվելու, ինչպես նաև թափուր աշխատատեղերի շուկային ծանոթանալու հարցերում՝ մասնագիտական վերապատրաստման և պրակտիայի ծրագրի հետ միասին, ծրագրեր, որոնք հասանելի են Կալիֆոռնիայի America's Job Center of CaliforniaSM (AJCC): Օգտվեք մեր Office Locator ծրագրից՝ գտնելու վիրտուալ կամ անձամբ հանդիպելու ծառայություններ, որոնք հասանելի են ձեզ:

CalJOBS[SM]

Կարող եք նաև աշխատանք որոնել և դիմել թափուր աշխատատեղի համար CalJOBS, Կալիֆոռնիայի աշխատանքի որոնման առցանց համակարգում: CalJOBS-ն օգնում է միավորել որակավորված աշխատանք փնտրողներին և գործատուներին և տրամադրում գործիքներ և ռեսուրսներ ձեզ օգնելու համար՝

- Ստեղծել և վերբեռնել ձեր ռեզյումեի բազմաթիվ տարբերակներ՝ կոնկրետ աշխատատեղի կամ մասնագիտական աճի համար:
- Աշխատանքի մասին վիրտուալ ծրագրի միջոցով ստանալ ավտոմատ ծանուցումներ և դիմում ներկայացնել:
- Ստանալ ծանուցումներ նոր աշխատատեղերի մասին՝ տեքստային հաղորդագրությունների կամ էլփոստի միջոցով:
- Գտնել կրթական և վերապատրաստման ծրագրեր և ծանոթանալ ձեր տեղական աշխատաշուկային:
- Դիտել միջոցառումներ, ինչպիսիք են սեմինարները և թափուր աշխատատեղերի տոնավաճառները՝ ըստ գտնվելու վայրի կամ ժամանակացույցի:
- Լինել հասանելի աշխատաշուկայի թրենդներին և տնտեսական ու ժողովրդագրական տվյալներին, որոնք աշխատանքի որոնման հարցում կօգնեն ձեզ:

Այցելել Labor Market Information for Job Seekersբաժին՝ պահանջարկ ունեցող աշխատանքներ գտնելու համար: Օգտագործել **Occupational Guides** կամ **Occupation Profile**՝ կարիերայի հնարավորությունները ուսումնասիրելու համար:

Աշխատանքի որոնման պահանջները՝ գործազրկության նպաստ ստանալու համար

Դուք ներկայումս ստանո՞ւմ եք գործազրկության նպաստ եթե այդպես է, դիմողների մեծամասնության համար աշխատանք փնտրելու պահանջը կվերականգնվի2021 **թվականի հուլիսի 11-ից՝** նպաստառուի իրավունակությունը պահպանելու համար: Այս պահանջը վերաբերում է հարմար աշխատանքի որոնմանը, որը անվտանգ է վերադառնալու համար և համապատասխանում է ձեր հմտություններին, փորձին, հիմնական մասնագիտությանը, տարիքին ու առողջությանը:

Կան աշխատանքի որոնման տարբեր պահանջներ, որոնք կիրառվում են անկախ նրանից, թե դուք ստանում եք կանոնավոր գործազրկության կամ ժամկետի երկարաձգման նպաստներ կամ համաճարակով Pandemic Unemployment Assistance (PUA):

- PUA-ն ստեղծվել է՝ աջակցելու նրանց, ովքեր չեն բավարարում սովորական պահանջներին, ինչպիսիք են՝ ինքնազբաղվածները կամ փոքր բիզնեսի սեփականատերերը: Կախված ամեն շաբաթ նպաստների վկայագրման ժամանակ համաճարակի հետ կապված նշվող պատճառներից՝ դուք կարող եք աշխատանքի համար հասանելի չլինել և ազատվել մեկ շաբաթվա ընթացքում աշխատանք փնտրելու պահանջից: Օրինակ՝ COVID-19-ի հետ կապված առողջական արտակարգ վիճակի պատճառով դուք առաջնային օգնություն եք ցուցաբերում երեխային, ով չի կարող դպրոց հաճախել:

Վերջին էջում թվարկված ցանկացած գործունեության մեջ ներգրավվելը նպաստների վկայագրման ժամանակ կարող է օգնել ձեզ պատասխանել «Այո» «Արդյո՞ք դուք աշխատանք եք փնտրում» հարցին: «Ոչ» պատասխանելը կհանգեցնի լրացուցիչ հարցերի և, հավանաբար, հարցազրույցի՝ հասկանալու, թե արդյոք դուք իրավունք ունեք այդ շաբաթ ստանալ նպաստ:

Աշխատանքի որոնման գործընթաց

Հայցի տեսակը՝ Regular Unemployment Insurance (UI) կամ Extension Claims	Հայցի տեսակը՝ Pandemic Unemployment Assistance (PUA) ՆՇՈՒՄ: Եթե այլևս չեք ցանկանում շարունակել ինքնազբաղվածությունը կամ նախկին աշխատանքը, բայց սովորական UI նպաստների իրավունք չունեք, լրացրեք ձախ սյունակում թվարկված աշխատանք փնտրելու գործընթացը:
Աշխատանքի որոնման նախապատրաստում Ստեղծեք ակաունտ CalJOBS-ում, մասնակցեք զբաղվածության ծառայություններին, ձեր պրոֆիլը տեղադրեք աշխատանք փնտրելու տարբեր կայքերում:	**Վերականգնեք ձեր գործը** Աշխատանքի և ինքնազբաղվածության համար հասանելի անձինք պետք է փաստաթղթեր պատրաստեն նոր կամ լրացուցիչ հաճախորդներ ձեռք բերելու, գործը շուկայահանելու, ընթացիկ պայմանագրերը վերանայելու և նորերը ուսումնասիրելու համար: Պայմանագրի հայտի պատրաստում և/կամ ներկայացում:
Ընդլայնեք ձեր ցանցը Տեղեկացրեք ընկերներին, նախորդ գործատուներին և համայնքի անդամներին, որ դուք աշխատանք եք փնտրում: Մասնակցեք ցանցային միջոցառումներին, աշխատանքի տոնավաճառներին կամ ակումբներին:	**Ընդլայնեք ձեր ցանցը** Մասնակցեք ցանցային միջոցառումներին, մասնակցեք համապատասխան սեմինարների կամ ընդլայնեք բիզնեսը սովորական ծառայություններից դուրս:
Դիմեք համապատասխան աշխատանքի համար Դիմեք այն գործատուներին, որոնք ունեն թափուր աշխատատեղեր, որոնք կհամապատասխանեն ձեր հմտություններին, փորձին, տարիքին և առողջական վիճակին՝ ներառյալ պետական պաշտոններն ու քննությունները:	**Ստեղծեք ակաունտ** Անկախ կապալառուները, ովքեր աշխատանքի համար հասանելի են և ներգրավված են առցանց հարթակում, ստեղծում են ակաունտ մեկ այլ առցանց հարթակում՝ ձեր որակավորմանը համապատասխանող աշխատանքի համար:
Վերապատրաստվեք Մասնակցեք դասընթացներին, որոնք կօգնեն ձեզ կրթություն ստանալ և չեն խանգարի ձեզ ընդունել համապատասխան լրիվ դրույքով աշխատանքի առաջարկը: Ներառում է ընտրանքներ, ինչպիսիք են համակարգչային գրագիտության կամ անգլերենը որպես երկրորդ լեզու (ESL) դասընթացները:	**Վերապատրաստվեք** Գրանցվեք ուսումնական կամ կրթական դասընթացներին, որոնք կօգնեն ձեր գործին և չեն խանգարի ձեզ վերադառնալ լիարժեք ինքնազբաղվածությանը:

Բացառություններ աշխատանք որոնելու պահանջներում

EDD-ն կորոշի, թե արդյոք կանոնավոր կամ երկարաժամկետ հայց ներկայացնողները ունեն աշխատանքի որոնման պահանջից ազատվելու իրավունք՝ կախված վկայագրման ժամանակ տրամադրած տեղեկատվությունից: Բացառությունները ներառում են՝

- Դուք մասնակցում եք պետության կողմից հաստատված ուսուցմանը՝ ներառյալ California Training Benefits:
- Դուք մասնակցում եք գործատուի կողմից հովանավորվող Work Sharing ծրագրին:
- Դուք արհմիութենական համաձայնագրի ներկայացուցիչ եք, որը կարգավորում է աշխատանքի որոնման պահանջները:
- Դուք ունեք աշխատանքի որոշ պարտավորություն ողջամիտ ժամկետով:
- Աշխատանքից ձեր հեռանալը ժամանակավոր է:
- Ձեր մասնագիտական հմտություններն ունեն սահմանափակ աշխատանքային հեռանկարներ:

Վերազբաղվածության ծառայություններ ֆ համապատասխանության գնահատում

Երբ աշխատանքի որոնման պահանջը վերսկսվում է, EDD-ն կարող է ձեզ հետ փոստով կապ հաստատել, որպեսզի կրկին այցելեք Reemployment Services and Eligibility Assessment appointment: Այս ծրագիրը նախատեսված է օժանդակելու UI նպաստներ ստացող հաճախորդներին՝ ընդեւնվել վերստին աշխատանքի սեմինարների և իրավասության անհատականացված ստուգման միջոցով: Եթե որոշել եք մասնակցել, դուք պետք է ներկայանաք նշանակված օրը և անցնեք ծրագրի հետագա ծառայությունները: Այս պահանջի չկատարումը կարող է ազդել ձեր նպաստների վրա:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք Job Seekers: Returning to work բաժինը: